ԿԱՐԾԻՔ

ԳԵՎՈՐԳ ՊԱՐԳԵՎԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ

«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ, ԱՄԵՐԻԿՅԱՆ ՈՒ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՇՈՒՐՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գևորգ Պարգևի Նազարյանի թեկնածուական ատենախոսությունը խիստ արդիական ու կենսական հիմնահարց է լուսաբանում: Հայկական դիվանագիտության համար չափազանց ուսանելի են մեկ դար առաջ տեղի ունեցած միջազգային իրադարձությունները, մեծ պետությունների քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և մասնավորաբար՝ Հայաստանում: Այսօր էլ տարածաշրջանային գրեթե նույնանման զարգացումներ են տեղի ունենում, որոնք մտահոգվելու տեղիք են տալիս:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ պատմաբաններիս խնդիրն է խորքային ուսումնասիրության ենթարկել Առաջին աշխարհամարտից հետո ստեղծված միջազգային հարաբերությունների խրթին թնջուկը, օբյեկտիվ ու մանրամասն հետազոտության հիման վրա լուսաբանել պատմական գործընթացներն իրենց բոլոր կողմերով: Դա կօգնի մերօրյա դիվանագետներին ավելի զգույշ, ճկուն և ճշգրիտ կազմակերպելու Հայաստանի արտաքին օրակարգը:

Շատ կարևոր է հիմնահարցի լուսաբանումը նրա սկզբնավորման շրջանից, որպեսզի ավելի հասկանալի լինեն հետագա զարգացումները, հաջողություններն ու ցավալի տապալումները: Միացյալ հայկական պետության կազմավորման գաղափարը բարձրացվել է Առաջին աշխարհամարտի բռնկվելուց անմիջապես հետո, ճանաչում ու միջազգային համակրանք է ձեռք բերել Անտանտի պետությունների կողմից պատերազմի տարիներին և դիվանագիտական սեղանի շուրջ լրջորեն քննարկվել է հետպատերազմյան քաղաքական ու միջազգային հարթակներում:

Շատ ողջունելի է, որ հեղինակը խնդիր է դրել բացահայտելու և լուսաբանելու հիմնահարցի բարձրացման, քննարկման ու ձախողման հետ կապված այդ բարդ գործընթացները: Ատենախոսության մեջ գիտական շրջանառության մեջ են դրվել մեծ քանակությամբ արխիվային փաստաթղթեր, որոնք վերաբերում են քննարկվող ժամանակաշրջանում միացյալ Հայաստանի նախագծերի կազմման գործընթացում հայկական, ամերիկյան և բրիտանական կողմերի տեսակետներին ու դրանց զարգացումներին:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հետագա հետազոտողների կողմից, Հայկական հարցին, ՀՀ արտաքին քաղաքականությանը վերաբերող գիտական ձեռնարկներում և դասագրքերում: Այն միանշանակ օգտակար կարող է լինել դիվանագիտությամբ զբաղվող գործիչների ու գերատեսչությունների համար:

Հետազոտությունը իրականացվել է փաստաթղթերի, մամուլի և գիտական գրականության բազմակողմանի քննական վերլուծության հենքի վրա՝ վերլուծական-համադրական, պատմահամեմատական, պատմաքննական մեթոդների կիրառմամբ:

Ատենախոսության համար հիմնային են հանդիսացել Հայաստանի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի արխիվային նյութերը: Օգտագործվել են նաև բազմաթիվ գիտական հետազոտություններ և մամուլը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու հավելված բաժնից: Աշխատության ծավալը կազմում է 194 (հավելվածով՝ 223) էջ:

Ներածության մեջ հեղինակը գիտական բարեխղճությամբ հիմնավորել է թեմայի արդիակությունը, գիտական նորույթը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլխում՝ «Հայկական պատվիրակությունների գործունեությունը Միացյալ Հայաստանի ստեղծման համար», ատենախոսը փորձել է ներկայացրել է Հայոց ազգային պատվիրակության գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին, միացյալ Հայաստանի իրագործման ուղղված քայլերը Մուդրոսի զինադադարից հետո,

ինչպես նաև հայկական երկու պատվիրակությունների գործունեությունը Փարիզի խաղաղության վեհաժողովում:

Երկրորդ գլխում՝ «Միացյալ Հայաստանի պետության բրիտանական նախագիծը», հեղինակը լուսաբանել է Հայաստանի ապագայի տեսլականը Մեծ Բրիտանիայի արտաքին քաղաքականության մեջ Առաջին աշխարհամարտի տարիներին և Մուդրոսի զինադադարի կնքումից հետո:

Երրորդ գլխում՝ «ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և միացյալ Հայաստանի նախագիծը Փարիզի խաղաղության վեհաժողովի համատեքստում», ատենախոսը ներկայացրել է հայ-ամերիկյան հարաբերությունների նախընթաց զարգացումները, Հայաստանի ու հայերի վերաբերյալ ամերիկյան ժողովրդի ու իշխանությունների դրական վերաբերմունքը: Գ. Նազարյանը պարզաբանել է միացյալ Հայաստանի ամերիկյան նախագիծը, ապա՝ հիմնախնդրի վերաբերյալ Քինգ-Քրեյնի և Հարբորդի հանձնաժողովների առաջարկները:

Չորրորդ գլխում՝ «Միացյալ Հայաստանի ձախողման պատճառները» հեղինակը լուսաբանել է միացյալ Հայաստանի ստեղծման գաղափարի տապալման պատճառները՝ դաշնակիցների հայտարարությունների ու վարած քաղաքականության հակասականությունը, թուրքական կողմի ներդրած հակահայկական գործնական ջանքերը:

Եզրակացություններ բաժնում հեղինակը ներկայացրել է հիմնահարցի հետ կապված իր սեփական եզրահանգումները:

Աշխատանքը կատարված է բավական պատշաճ գիտական մակարդակով, պարունակում է գիտական նորույթ և հաջողված է:

Սակայն ունենք որոշ դիտարկումներ Գևորգ Նազարյանի թեկնածուական ատենախոսության մեջ թույլ տրված բացթողումների ու թերացումների վերաբերյալ:

- Հեղինակը ծանոթ չէ հիմնահարցի հետ կապված մեր երկու տասնյակից ավելի աշխատություններից ոչ մեկին, որի արդյունքում բավական թերացումներ կան աշխատանքի հատկապես առաջին գլխում:

1. Պողոսեան Ս., Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, «Զանգակ-97», 2004, 264 էջ:
2. Poghosyan S., Galstyan G., Hovhannisyan E., The collapse of Empires in the 20th century: New states and new identities, «Lusakn», Yerevan, 2020, 332 էջ:
3. Վիրաբյան Վ., Պողոսյան Ս., Եփրիկյան Ա., Հայկական զինուժը 1914-1920 թթ., Երևան, «Լուսակն», 2020, 716 էջ:
4. Պողոսյան Ս., Հովհաննիսյան Է., Վիրաբյան Վ., Ստեփանյան Խ., Փահլևանյան Կ., Եփրիկյան Ա., Հակոբ Հարություն, Բեժանյան Մ., Հայկական զինուժը Առաջին աշխարհամարտի տարիներին, Երևան, «Վան Արյան», 2019, 144 էջ:
5. Պողոսյան Ս., Հայկական հարցի քաղաքական աշխարհագրությունը. Բեռլինից մինչև Սևր, ՎԷՄ, 2020, թիվ 3 (71), էջ 13-69:
6. Պողոսյան Ս., Հայկական պետականության վերականգնման խնդիրը և կամավորական շարժումը Առաջին աշխարհամարտի տարիներին, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու, 2020, թիվ 1, էջ 57-65:
7. Պողոսյան Ս., Գևորգ Ե Սուրենյանցը և միացյալ Հայաստանի հարցը առաջին աշխարհամարտի տարիներին, Էջմիածին, 2018, թիվ 7, էջ 84-100:
8. Պողոսյան Ս., Միացյալ Հայաստանի հարցը 1918 թ. վերջին, «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» երրորդ միջազգային գիտաժողովի (Երևան, 04.05.2018) նյութերի ժողովածու, Երևան, 2018, էջ 8-13:
9. Погосян С., Армянские деятели России об автономии Западной Армении в 1914-1915 гг., Армяне Юга России: история, культура, общее будущее: материалы III Международной научной конференции (г. Ростов-на-Дону, 30–31 мая 2018 г.), 2018, с. 155-158.
10. Պողոսյան Ս., Անտանտի երկրների դիրքորոշումը Հայաստանի անկախության հարցում Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, Մեսրոպ Մաշտոց համալսարանի 20-ամյակին նվիրված «Կովկասը՝ մեր ընդհանուր տուն» թեմայով միջազգային գիտաժողովի (27-29 հոկտեմբեր, 2017, Ստեփանակերտ) նյութերի ժողովածու, Երևան, 2017, էջ 152-155:
11. Պողոսյան Ս., Մուդրոսի զինադադարը և Հայկական հարցը, Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Լրատու: Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Երևան, 2016, էջ 176-182:
12. Պողոսյան Ս., Միացյալ Հայաստանի խնդիրը 1917-1918 թթ., Պատմություն և հասարակագիտություն տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու), թիվ 2, Երևան, 2016, էջ 8-23:

13. Պողոսյան Ս., Սայքս-Պիկո-Նուբար համաձայնության պայմանների փոփոխումը Ֆրանսիայի կողմից, Պատմություն և հասարակագիտություն տարեգիրք (Գիտական հոդվածների ժողովածու), թիվ 1, Երևան, 2015, էջ 172-187:
14. Պողոսյան Ս., The Entente States' ambitions in Cilicia during First World War, Conference Proceedings of 2nd International multidisciplinary scientific conference on social sciences & arts SGEM 2015, Book 3 (Anthropology, archaeology, history and philosophy), Sofia, 2015, pp. 471-478.
15. Պողոսյան Ս., Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության հարցը ռուսական դիվանագիտության 1914-1915 թթ. գաղտնի ծրագրերում, ՎԷմ, Երևան, 2015, թիւ 2 (50), էջ 59-77:
16. Պողոսյան Ս., Հայկական զինուժի դերը Պաղեստինյան ռազմաճակատում 1918 թ., Էջմիածին, 2015, թիվ 7, էջ 102-117:
17. Պողոսյան Ս., Գևորգ Ե կաթողիկոսի և Պողոս Նուբարի նամակագրությունը, Էջմիածին, 2013, թիվ 4, էջ 45-59:
18. Պողոսյան Ս., Կիլիկիայի հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում, ՎԷմ, Երևան, 2012, թիվ 3, էջ154-168:
19. Պողոսյան Ս., Մարկ Սայքսի դիրքորոշումը հայերի և Հայկական հարցի վերաբերյալ, Հայկազեան հայագիտական հանդես, Բեյրութ, 2012, թիւ 1, էջ 55-80:
20. Պողոսյան Ս., Ռուսաստանը և Կիլիկիայի հարցը 1914-1916 թթ., Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, Երևան, 2008, թիվ 1-2 (7-8), էջ 23-29:
21. Պողոսյան Ս., Փարիզի ազգային համագումարը (1919թ. փետրվար 18 - ապրիլ 22), Լրատու: Գիտական հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2007, թիվ 1, էջ 54-65:
22. Պողոսյան Ս., Կիլիկիայի հարցը 1920թ. Սևրի պայմանագրից հետո, Հայոց պատմության հարցեր, Երևան, 2006, թիվ 7, էջ 166-178:
23. Պողոսյան Ս., Պողոս Նուպարը և Հայկական Հարցի զարգացումները 1912-1921թթ., Հանդէս ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2005, թիւ 1-12, էջ 416-446:
24. Պողոսյան Ս., Փարիզի վեհաժողովի հայկական հուշագիրը և նրա հետագա ճակատագիրը, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Երևան, թիվ 6, 2002, էջ 119-129:

- Առաջին գլուխը սկսվում է «Հայոց ազգային պատվիրակության գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին» ենթագլխով: Հեղինակը միացյալ Հայաստանի գաղափարի բարձրացումը կապում է Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի անվան հետ:

Այստեղից պարզ է դառնում, որ հեղինակը ծանոթ չէ, որ միացյալ, ծովից ծով Հայաստանի գաղափարը սկսել է արծարծվել դեռևս 1914 թ.-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի ու արևելահայ քաղաքական ուժերի կողմից: Ատենախոսը տեղյակ չէ այդ հարցի շուրջ Հակոբ Զավրյանի բանակցություններին ռուսական պետական գործիչների հետ, դեռևս 1914 թ. Ալեքսեյ Ջիվելեգովի ու Գաբրիել Մնացականյանի հրապարակումներին ևն:

- Մարկ Սայքսին հետախուզության սպա (էջ 19) անվանելը այնքան էլ ճիշտ չէ: Նա Լորդերի պալատի կաթոլիկ խմբակցության ղեկավարն էր, հանդիսանում էր բրիտանական ԱԳՆ Մերձավոր Արևելքի հարցերով գլխավոր խորհրդատուն:
- Էջ 19-ում թյուրիմացաբար նշվում է, որ Սայքս-Պիկոյի համաձայնագրով Դիարբեքիրը անցնում էր Ռուսաստանին: Իրականում այդ նահանգից որևէ հատված չէր անցնելու ռուսական տիրապետության տակ, ընդհակառակը՝ Բիթլիսի ու Վանի հարավային որոշ տարածքներ մտնելու էին ֆրանսիական գոտու մեջ:
- Էջ 20-ի առաջին պարբերություն, որը վերաբերում է արևմտահայերի համագումար կազմակերպելու կաթողիկոսի նախաձեռնությանը, ամբողջությամբ կոնտեքստից դուրս է և անիմաստ: Չէր խանգարի, եթե այդտեղ խոսվեր Գևորգ Ե կաթողիկոսի կողմից միացյալ Հայաստանի պահանջների մասին:
- Հեղինակը թյուրիմացաբար նշում է, որ Հակոբ Զավրյանը Ազգային պատվիրակության անդամ էր (էջ 21): Պ. Նուբարը կողմ էր, որ այդ հայրենանվեր գործիչը միանար, նույնիսկ կաթողիկոսը նամակով իր համաձայնությունն էր տվել, բայց Հ. Զավրյանը հրաժարվել է:
- Ամբողջական Հայաստանի անկախությունը Պ.Նուբարը հռչակել է ոչ թե 1918 թ. դեկտեմբերի 4-ին (էջ 31), այլ՝ նոյեմբերի 30-ին:

- Աշխատանքը կշահեր, եթե առաջին գլխում ներկայացված լինեին ամբողջական Հայաստանի վերաբերյալ հայկական ու ռուսական նախագծերը, որոնք առաջ են քաշվել 1914-1917 թթ.:
- էջ 35 – Հեղինակը գրում է. *«1919 թ. փետրվարի 19-26-ը Երևանում կայացավ Արևմտահայերի երկրորդ համագումարը, որը, Հայաստանը ճանաչելով որպես «անկախ և միացյալ», ՀՀ պատվիրակությանը լիազորեց խաղաղության վեհաժողովում նաև իր անունից բանակցություններ վարել»:* Դա այնքան էլ ճիշտ չէ: Արևմտահայերի երկրորդ համագումարը տեղի է ունեցել փետրվարի 6-13-ը, երկրորդ՝ այն լիակատար վստահություն է հայտնել Պ. Նուբարի իբրև Փարիզում կազմավորած Ազատ և Միացյալ Հայաստանի կառավարությանը: *(Տե՛ս, Համահայկական խորհրդակցություններ (1912-1920 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2004, էջ 303):* Նրանք սխալմամբ կարծում էին, որ Պ. Նուբարը կառավարություն է կազմավորել:
- էջ 152-153-ում երիտթուրքերի ձերբակալությունների մասին է, որ թեմայից շեղում է:
- 156 և 162 էջերում հեղինակը նշում է, որ թուրքական բանակը «խախտելով Մուդրոսի զինանադադարի պայմանները, չէր զինաթափվել»: Պետք է արձանագրենք, որ Հայաստանում և Փոքր Ասիայում գտնվող թուրքական բանակը, ցավոք սրտի, Մուդրոսի զինադադարով զորացրել նախատեսված չէր: Դա հետագայում թույլ տվեց սկսելու քեմալական շարժումը:
- Եզրակացություններ բաժնում ոչ մի խոսք չկա հայկական, ամերիկյան, բրիտանական նախագծերի և դրանց վերաբերյալ հեղինակի կարծիքի մասին:

Մեր կողմից մատնանշված թերացումները իրականում չեն ստվերում ատենախոսության գիտականությունը և կատարված հսկայական աշխատանքը: Հույս ունենք, որ հետագայում՝ աշխատության հրատարակման ժամանակ, դրանք հաշվի կառնվեն և ավելի կբարձրացնեն ուսումնասիրության արժեքը:

Գևորգ Պարգևի Նազարյանի «Միացյալ Հայաստանի հայկական, ամերիկյան ու բրիտանական նախագծերը Փարիզի խաղաղության վեհաժողովում և դրանց շուրջ տեղի ունեցած զարգացումները» ուսումնասիրությունը պարունակում է գիտական նորույթ և լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսության համար պահանջվող չափանիշներին: Աշխատանքի գիտական դրույթներն ու եզրակացությունները հիմնված են փաստարկված նյութի վրա: Շրջանառության մեջ են դրվել ամերիկյան ու բրիտանական արխիվների նոր փաստաթղթեր: Ուստի, միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդին՝ Գևորգ Պարգևի Նազարյանին շնորհելու նրա հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ս. Պողոսյան

Ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՄՀ գիտական քարտուղար՝ մ.գ.թ., դոցենտ Մ. Իսպիրյան

16.04.2021